Ընկերությունների իրավունք

1. Ընկերությունների իրավունք

Ներածություն

Ընկերությունների իրավունքի բնագավառում ՀՀ օրենսդրությունը մասամբ համապատասխանում է ԵՄ օրենսդրության չափանիշներին: Ամբողջական համապատասխանություն առկա է միայն հաշվապահական ստանդարտների իրավական կարգավորման բնագավառում:

Ընկերությունների իրավունքի բնագավառում Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման, կանոնադրական կապիտալի փոփոխման, այդ կազմակերպությունների կողմից տեղեկությունների պարտադիր հրապարակման հարցերը: Նշված հարցերը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով[1], «Բաժնետիրական ընկերությունների մասին»[2], «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»[3], «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին»[4] ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով, որոնք, այնուամենայնիվ, ամբողջապես չեն ներառում Եվրամիության օրենսդրական չափանիշները:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ստույգ չի նախատեսվում իրավաբանական անձանց կողմից հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը և հրապարակման կարգը, տեղեկությունների հրապարակման պարտավորությունների չկատարման համար պատասխանատվությունը, ինչպես նաև իրավաբանական անձանց ներկայացուցչությունների և մասնաճյուղերի մասին տեղեկությունների պարտադիր հրապարակումը: ՀՀ օրենսդրությունը նախատեսում է առևտրային կազմակերպությունների վերակազմակերպումը բաժանման ճանապարհով միայն նոր իրավաբանական անձանց ստեղծման միջոցով, մինչդեռ օրենսդրությունը չի նախատեսում ընկերության բաժանումը և իրավահաջորդության կարգով իր իրավունքների ու պարտականությունների փոխանցումն արդեն իսկ գոյություն ունեցող իրավաբանական անձանց: Բացի այդ, մանրամասնորեն չեն կարգավորվում նաև ընկերությունների միաձուլման և միացման հետ կապված իրավահարաբերությունները:

Հայաստանի Հանրապետությունում չեն կարգավորվում նաև ընկերությունների ձեռքբերման առաջարկների հետ կապված իրավահարաբերությունները, որոնք առանցքային նշանակություն ունեն Եվրամիության օրենսդրության տվյալ բնագավառում:

Հիմնվելով համեմատական վերլուծության արդյունքների վրա՝ պետք է ընդգծել, որ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում[5] բացակայում են Եվրամիության **չորրորդ** և **յոթերորդ դիրեկտիվների** մի շարք կարևոր դրույթներ: 1996թ. մայիսի 2-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 147 որոշման 31-րդ կետով նախատեսվում է ընկերությունների ամփոփ հաշվետվությունների կազմում Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հաստատած կարգի համաձայն, որը, սակայն, չի ընդունվել: Այդ իսկ պատճառով ամփոփ հաշվետվությունները կազմելու հետ կապված հարաբերությունները նույնպես հստակորեն չեն կարգավորվում:

Ութերորդ դիրեկտիվի հիման վրա համապատասխանեցման ենթակա է նաև «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքը[6]: Աուդիտորական գործունեություն իրականացնելու համար բավական բարդ պահանջներ են նախատեսված ֆիզիկական անձանց համար, որոնցից մասնավորապես պահանջվում է ստանալ համապատասխան որակավորում և գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր (վերջինս չի նախատեսվում ԵՄ օրենսդրությամբ), որից հետո միայն նրանք կարող են դիմել՝ աուդիտ իրականացնելու լիցենզիա ստանալու համար:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2006 – 2009թթ. ընթացքում ամբողջովին համապատասխանեցնել «Ընկերությունների իրավունքի» ենթագլուխը ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2006 թվական

Համարելով առևտրային կազմակերպությունների գործունեության ընդհանուր կարգավորման համապատասխանեցումը սույն ենթագլխի հիմնական գերակայությունը և հաշվի առնելով այդ խնդրի

---

[1] ՀՕ-239, 05.05.1998թ.:
[2] ՀՕ-232, 25.09.2001թ.:
[3] ՀՕ-252, 24.10.2001թ.:
[4] ՀՕ-169, 03.04.2001թ.:
[5] ՀՕ-515, 26.12.2002թ.:
[6] ՀՕ-512, 26.12.2002թ.:

լուծման համար ներկայիս բավարար ինստիտուցիոնալ կարողությունները՝ Հայաստանի Հանրապետության ընկերությունների մասին օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրամիության Խորհրդի **երկրորդ և տասներկուերորդ դիրեկտիվներին**[7]:

Մասնավորապես, կկատարվեն փոփոխություններ և լրացումներ «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներում՝ ընկերությունների հիմնադրման, դրանց կանոնադրական կապիտալի ձևավորման և փոփոխման կարգավորման համատեքստում:

Մեկ անձից բաղկացած սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների իրավական կարգավիճակի կարգավորման համապատասխանեցման նպատակով կկատարվեն փոփոխություններ և լրացումներ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում:

2007 թվական

Հայաստանի Հանրապետության ընկերությունների մասին օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրամիության Խորհրդի **երրորդ, վեցերորդ և յոթերորդ դիրեկտիվներին**[8]: Ընկերությունների բաժանման, միացման և միաձուլման իրավական կարգավորումը ԵՄ իրավական ակտերով ամրագրված չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում:

Ամփոփ հաշվետվություններին ներկայացվող չափանիշների օրենսդրական կարգավորման բացը Խորհրդի **յոթերորդ դիրեկտիվին** համապատասխան լրացնելու նպատակով կմշակվի «Ամփոփ հաշվապահական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Ընկերությունների իրավունքի բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կհամապատասխանեցվի նաև ԵՀ 2004թ. ապրիլի 21-ի՝ թիվ 2004/25 դիրեկտիվին, Խորհրդի 2001թ. հոկտեմբերի 8-ի՝ թիվ 2157/2001 կանոնակարգին,[9]:

Հայաստանի Հանրապետությունում ընկերությունների ձեռքբերման իրավական կարգավորման բացը լրացնելու համար կմշակվի «Առևտրային կազմակերպությունների ձեռքբերման առաջարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ընկերությունների կանոնադրությանը ներկայացվող եվրոպական չափանիշները ՀՀ օրենսդրության մեջ արտացոլելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում:

2008 թվական

ՀՀ օրենսդրության համապատասխանեցման համար հիմք կհանդիսանան **չորրորդ, առաջին, տասնմեկերորդ դիրեկտիվները**, Խորհրդի 1968թ. հուլիսի 22-ի՝ թիվ 1435/2003 կանոնակարգը և ԵՀ Խորհրդի 2003թ. հուլիսի 22-ի՝ թիվ 2003/72/ դիրեկտիվը[10]:

---

[7] 1976թ. դեկտեմբերի 13-ի Խորհրդի երկրորդ դիրեկտիվ թիվ 77/91՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հիմնադրման և նրանց կապիտալի ձևավորման և փոփոխման հետ կապված՝ Համաձայնագրի 58 հոդվածի իմաստով ընկերությունների անդամ պետությունների կողմից անդամների և այլոց շահերի պաշտպանության համար պահանջվող երաշխիքների կոորդինացման մասին», 1989թ. դեկտեմբերի 21-ի Խորհրդի տասներկուերորդ դիրեկտիվ թիվ 89/667՝ «Մեկ անձից բաղկացած սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»:

[8] 1978թ. հոկտեմբերի 9-ի Խորհրդի երրորդ դիրեկտիվ թիվ 78/855՝ «Համաձայնագրի 54(3)(g) հոդվածի հիման վրա սահմանափակ պատասխանատվությամբ հանրային ընկերությունների մասին», 1982թ. դեկտեմբերի 17-ի Խորհրդի վեցերորդ դիրեկտիվ թիվ 82/891՝ «Համաձայնագրի 54(3)(g) հոդվածի հիման վրա սահմանափակ պատասխանատվությամբ հանրային ընկերությունների բաժանման մասին», 1983թ. հունիսի 13-ի Խորհրդի յոթերորդ դիրեկտիվ թիվ 83/349՝ «Համաձայնագրի 54 (3)(g) հոդվածի հիման վրա ամփոփ հաշվապահական հաշվետվությունների մասին»:

[9] 2004թ. ապրիլի 21-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2004/25՝ «Ընկերությունների ձեռքբերման առաջարկների մասին», 2001թ. հոկտեմբերի 8-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2157/2001՝ «Եվրոպական Ընկերության կանոնադրության մասին»:

[10] 1978թ. հուլիսի 25-ի Խորհրդի չորրոդ դիրեկտիվ թիվ 78/660՝ «Համաձայնագրի 54(3)(g) հոդվածի հիման վրա ընկերությունների որոշ տեսակների տարեկան հաշվապահական հաշվետվությունների մասին», 1968թ. մարտի 9-ի Խորհրդի առաջին դիրեկտիվ թիվ 68/151՝ «Համաձայնագրի 58 հոդվածի երկրորդ պարբերության իմաստով ընկերությունների անդամ պետությունների կողմից անդամների և այլոց շահերի պաշտպանության համար պահանջվող երաշխիքները Համայնքում համարժեք դարձնելու նպատակով դրանց համակարգման մասին», 1989թ. դեկտեմբերի 21-ի Խորհրդի տասնմեկերորդ դիրեկտիվ թիվ 89/666/EEC՝ «Այլ պետության իրավունքով կարգավորվող որոշակի տեսակների ընկերությունների կողմից անդամ պետությունում հաստատված մասնաճյուղերի վերաբերյալ հրապարակման պահանջների մասին», 2003թ. հուլիսի 22-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1435/2003՝ «Եվրոպական կոոպերատիվ հասարակության (ընկերության) կանոնադրության մասին», 2003թ. հուլիսի 22-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/72՝ «Աշխատողների ներգրավվածության առումով Եվրոպական կոոպերատիվ հասարակության (իրավաբանական անձ) կանոնադրությունը լրացնելու մասին»:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում առևտրային կազմակերպությունների կողմից հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը և հրապարակման կարգը ԵՄ իրավական ակտերով սահմանված չափանիշներին համապատասխան սահմանելու անհրաժեշտությունը՝ կմշակվի «Առևտրային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Բացի այդ, կմշակվի նաև «Օտարերկրյա իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների կողմից հրապարակման ենթակա տեղեկությունների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Կկազմակերպվի առևտրային կազմակերպությունների կողմից պարտադիր հրապարակվող տեղեկությունների վերաբերյալ դասընթաց:

Կոոպերատիվների իրավական կարգավիճակը, գործունեության կարգն ու պայմանները ԵՄ իրավական ակտերով սահմանված չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով կմշակվի «Կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Հաշվի առնելով ընկերությունների կողմից տարեկան հաշվապահական հաշվետվությունները կազմելու և ներկայացնելու նկատմամբ Եվրամիության օրենսդրությամբ ներկայացվող պահանջները ՀՀ օրենսդրության մեջ ամրագրելու անհրաժեշտությունը՝ կմշակվեն «Հաշվապահական հաշվառման մասին» և «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

2009թվական

ՀՀ օրենսդրության համապատասխանեցման համար հիմք կհանդիսանա Եվրոպական Խորհրդի **ութերորդ դիրեկտիվը**[11]:

Եվրոպական Միության օրենսդրական չափանիշներին համապատասխան աուդիտորական գործունեություն իրականացնող անձանց իրավական կարգավիճակը և վերջիններիս հաստատման կարգը սահմանելու նպատակով կմշակվի «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

[11] 1984թ. ապրիլի 10-ի Խորհրդի ութերորդ դիրեկտիվ թիվ 84/253՝ «Համաձայնագրի 54(3)(g) հոդվածի հիման վրա հաշվապահական փաստաթղթերի կանոնադրական աուդիտի իրականացման համար պատասխանատու անձանց հաստատման մասին»:

1.1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2006						
1.	• «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1976թ. դեկտեմբերի 13-ի «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հիմնադրման և նրանց կապիտալի ձևավորման և փոփոխման հետ կապված՝ Համաձայնագրի 58 հոդվածի իմաստով ընկերությունների անդամ պետությունների կողմից անդամների և այլոց շահերի պաշտպանության համար պահանջվող երաշխիքների կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 77/91 Երկրորդ դիրեկտիվ	ՀՀ արդարադատության նախարարություն	4-րդ եռամսյակ	57	Նախնական փորձաքննություն
2.	«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1989թ. դեկտեմբերի 21-ի «Մեկ անձից բաղկացած սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Խորհրդի թիվ 89/667 տասներկուերորդ դիրեկտիվ	ՀՀ արդարադատության նախարարություն	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					72	
2007						
3.	• ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ	1978թ. հոկտեմբերի 9-ի «Համաձայնագրի 54(3)(g)	ՀՀ արդարադատության	1-ին եռամսյակ	63	Խորհրդատվություն

	և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	հոդվածի հիման վրա սահմանափակ պատասխանատվությամբ հանրային ընկերությունների մասին» Խորհրդի թիվ 78/855 Երրորդ դիրեկտիվ 1982թ. դեկտեմբերի 17-ի «Համաձայնագրի 54(3)(g) հոդվածի հիման վրա սահմանափակ պատասխանատվությամբ հանրային ընկերությունների բաժանման մասին» Խորհրդի թիվ 82/891 վեցերորդ դիրեկտիվ	նախարարություն (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մասնակցությամբ)			
4	«Ամփոփ հաշվապահական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1983թ. հունիսի 13-ի «Համաձայանագրի 54 (3) (g) հոդվածի հիման վրա ամփոփ հաշվապահական հաշվետվությունների մասին» Խորհրդի թիվ 83/349 Յոթերորդ դիրեկտիվ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	1-ին եռամսյակ	66	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	«Առևտրային կազմակերպությունների ձեռքբերման առաջարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2004թ. ապրիլի 21-ի «Ընկերությունների ձեռքբերման առաջարկների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2004/25 դիրեկտիվ	ՀՀ արդարադատության նախարարություն	3-ին եռամսյակ	42	Նախնական փորձաքննություն
6.	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2001թ. հոկտեմբերի 8-ի «Եվրոպական ընկերության կանոնադրության մասին» Խորհրդի թիվ 2157/2001 կանոնակարգ	ՀՀ արդարադատության նախարարություն	4-րդ եռամսյակ	96	Նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**267**	

			2008			
7.	«Առևտրային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1968թ. մարտի 9-ի «Համաձայնագրի 58 հոդվածի երկրորդ պարբերության իմաստով ընկերությունների անդամ պետությունների կողմից անդամների և այլոց շահերի պաշտպանության համար պահանջվող երաշխիքներտ Համայնքում համարժեք դարձնելու նպատակով դրանց կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 68/151 առաջին դիրեկտիվ	ՀՀ արդարադատության նախարարություն	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրաստում
8.	«Օտարերկրյա իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների կողմից հրապարակման ենթակա տեղեկությունների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1989թ. դեկտեմբերի 21-ի «Այլ պետության իրավունքով կարգավորվող որոշակի տեսակների ընկերությունների կողմից անդամ պետությունում հաստատված մասնաճյուղերի վերաբերյալ հրապարակման պահանջների մասին» Խորհրդի թիվ 89/666 Տասնմեկերորդ դիրեկտիվ	ՀՀ արդարադատության նախարարություն	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրաստում
9.	«Կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2003թ. հուլիսի 22-ի «Եվրոպական կոոպերատիվ հասարակության (ընկերության) կանոնադրության մասին» Խորհրդի թիվ 1435/2003 կանոնակարգ 2003թ. հուլիսի 22-ի «Աշխատողների ներգրավվածության առումով Եվրոպական կոոպերատիվ հասարակության	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	171	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրաստում

		(իրավաբանական անձ) կանոնադրությունը լրացնելու մասին» Խորհրդի թիվ 2003/72 դիրեկտիվ				
10	• «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1978թ. հուլիսի 25-ի «Համաձայնագրի 54(3)(g) հոդվածի հիման վրա ընկերությունների որոշ տեսակների տարեկան հաշվապահական հաշվետվությունների մասին» Խորհրդի թիվ 78/660 Չորրոդ դիրեկտիվ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	4-րդ եռամսյակ	81	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրաստում
ԸՆԴԱՄԵՆԸ					282	
2009						
11.	«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1984թ. ապրիլի 10-ի «Համաձայնագրի 54(3)(g) հոդվածի հիման վրա հաշվապահական փաստաթղթերի կանոնադրական աուդիտի իրականացման համար պատասխանատու անձանց հաստատման մասին» Խորհրդի թիվ 84/253 Ութերորդ դիրեկտիվ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2-րդ եռամսյակ	24	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					24	
					645	

1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[12]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	-	Եվրամիությունում համակենտրոնացումների կարգավորման վերաբերյալ դասընթացներ (2006-2007թթ.)	Խորհրդատվություն
2.	ՀՀ արդարադատության նախարարություն	-	Առևտրային կազմակերպությունների կողմից պարտադիր հրապարակվող տեղեկությունների վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.)	Խորհրդատվություն
3.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	-	Եվրոպական կոոպերատիվների վերաբերյալ դասընթաց (3 օր / 2008թ.)	Խորհրդատվություն

[12] Օրենսդրական համապատասխանեցման աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունում և գերատեսչությունում կստեղծվի ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանում:

2. Մտավոր սեփականության իրավունք

2.1. Հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ

Ներածություն

Մտավոր սեփականության բնագավառում ՀՀ օրենսդրությունը, ի համեմատություն Եվրամիության օրենսդրության, կարգավորում է համապատասխան հարաբերությունները բավական ընդհանրացված ձևով և հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը, որտեղ այդ հարաբերությունները կարգավորվում են ավելի մանրամասնորեն:

Այս բնագավառում ԵՄ օրենսդրությունը սահմանում է հեղինակային իրավունքը և հարակից իրավունքները կարգավորող ընդհանուր իրավական նորմեր, իսկ հատուկ ոլորտների (օրինակ, համակարգչային ծրագրեր, տվյալների շտեմարաններ և այլն) իրավական կարգավորման համար նախատեսում է առանձին իրավական ակտեր:

Հայաստանի Հանրապետությունում հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով[13] և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»[14] ՀՀ օրենքով: Նշված օրենքը սահմանում է ընդհանուր դրույթներ ստեղծագործության օգտագործման տարբեր եղանակների, հեղինակի օգտին ստեղծագործության վերավաճառքի իրավունքի, վարձակալության իրավունքի, արբանյակային հեռարձակման և կաբելային վերահեռարձակման հեղինակային և հարակից իրավունքների, տվյալների բազաների, համակարգչային ծրագրերի իրավական պաշտպանության հետ կապված իրավահարաբերութուններ կարգավորման վերաբերյալ, սակայն չի ներառում մանրամասնեցված և հստակեցված իրավական նորմեր, մինչդեռ նշված իրավական ինստիտուտները եվրոպական օրենսդրությամբ կարգավորվում են առանձին նորմատիվ իրավական ակտերով:

Ելնելով ՀՀ տնտեսական քաղաքականության ոլորտում մտավոր սեփականության պաշտպանության հարցերի արդյունավետ կարգավորման գերակայությունից և անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունների առկայությունից՝ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2006-2008թթ. ընթացքում «Մտավոր սեփականության իրավունք» ենթագլուխը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2006 թվական

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների բնագավառում առաջացող իրավահարաբերությունների մանրամասն և համապարփակ կարգավորման գերակայությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կհամապատասխանեցվի ընդհանուր կարգավորման դաշտ սահմանող Եվրամիության 2001թ. մայիսի 22-ի թիվ 2001/29, 1993թ. հոկտեմբերի 29-ի թիվ 93/98[15]:

Մասնավորապես, փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում՝ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների բնագավառի իրավահարաբերությունների կարգավորումն ավելի հստակեցնելու և մանրամասնելու համար:

2007 թվական

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների բնագավառում համապատասխանեցման կենթարկվեն 2001թ. սեպտեմբերի 27-ի թիվ 2001/84 և 1992թ. դեկտեմբերի 19-ի թիվ 92/100 դիրեկտիվները[16]:

Հեղինակի օգտին արվեստի ստեղծագործության վերավաճառքի, ինչպես նաև մտավոր սեփականության բնագավառում վարձակալության և այլ հարակից իրավունքների կարգավորման

---

[13] ՀՕ-239, 05.05.1998թ.:

[14] ՀՕ-28, 08.12.1999թ.:

[15] 2001թ. մայիսի 22-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/29՝ «Տեղեկատվական հասարակությունում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների որոշ ասպեկտների ներդաշնակեցման մասին», 1993թ. հոկտեմբերի 29-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 93/98՝ «Հեղինակային իրավունքի և որոշ հարակից իրավունքների պաշտպանության պայմանները ներդաշնակեցնելու մասին»,:

[16] 2001թ. սեպտեմբերի 27-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/84՝ «Արվեստի ստեղծագործության հեղինակի օգտին վերավաճառքի իրավունքի մասին», 1992թ. դեկտեմբերի 19-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 92/100՝ «Մտավոր սեփականության բնագավառում վարձակալական և հեղինակային իրավունքի որոշ հարակից իրավունքների մասին»:

բացերը լրացնելու և անճշտությունները շտկելու նպատակով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ:

2008 թվական

Հեղինակային և հարակից իրավունքների ոլորտային առանձնահատկությունների իրավական կարգավորման նպատակով հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի 1993թ. սեպտեմբերի 27-ի թիվ 93/83 և 1996թ. մարտի 11-ի թիվ 96/9 դիրեկտիվներին[17]:

Արբանյակային հեռարձակման և կաբելային վերահեռարձակման բնագավառում ծագող իրավահարաբերությունների մանրամասն կարգավորման և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը հատուկ նորմերով չծանրաբեռնելու նպատակով կմշակվի «Արբանյակային հեռարձակման և կաբելային վերահեռարձակման բնագավառում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ինչպես նաև համապատասխան փոփոխություններ կկատարվեն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում:

Տվյալների բազաների իրավական պաշտպանության բնագավառում առաջացող իրավահարաբերությունների ամբողջական և բազմակողմանի կարգավորման նկատառումներից ելնելով՝ կմշակվեն «Տվյալների բազաների իրավական պաշտպանության մասին» և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր:

2009 թվական

2009թ. կշարունակվի հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանության առանձին բնագավառների՝ ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ իրավական ակտերով սահմանված չափանիշներին,մասնավորապես՝ 1998թ. նոյեմբերի 20-ի թիվ 98/84 դիրեկտիվին, 1991թ. մայիսի 14-ի թիվ 91/250 դիրեկտիվին18:

Պայմանական մուտքի վրա հիմնված ծառայությունների իրավական պաշտպանության կարգավորման բացը լրացնելու նպատակով կմշակվի «Պայմանական մուտքի վրա հիմնված կամ դրանից բաղկացած ծառայությունների իրավական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Եվրամիության չափանիշներին համապատասխան՝ համակարգչային ծրագրերի առանձնահատուկ իրավական կարգավորման նպատակով կմշակվի «Համակարգչային ծրագրերի իրավական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ինչպես նաև համապատասխան փոփոխություններ կկատարվեն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում:

---

[17] 1993թ. սեպտեմբերի 27-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 93/83՝ «Արբանյակային հեռարձակման և կաբելային վերահաղորդման հետ կապված հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների վերաբերյալ որոշ կանոնների համակարգման մասին», 1996թ. մարտի 11-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 96/9՝ «Տվյալների բազաների իրավական պաշտպանության մասին»:

[18] 1998թ. նոյեմբերի 20-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 98/84՝ «Պայմանական մուտքի վրա հիմնված կամ դրանից բաղկացած ծառայությունների իրավական պաշտպանության մասին», 1991թ. մայիսի 14-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 91/250՝ «Համակարգչային ծրագրերի իրավական պաշտպանության մասին»:

2.1.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2006						
1.	«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2001թ. մայիսի 22-ի «Տեղեկատվական հասարակությունում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների որոշ ասպեկտների ներդաշնակեցման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2001/29 դիրեկտիվ 1993թ. հոկտեմբերի 29-ի «Հեղինակային իրավունքի և որոշ հարակից իրավունքների պաշտպանության պայմանները ներդաշնակեցնելու մասին» Խորհրդի թիվ 93/98 դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	24	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					24	
2007						
2.	• «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	2001թ. սեպտեմբերի 27-ի «Արվեստի ստեղծագործության հեղինակի օգտին	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	մասին օրենքի նախագծի մշակում	վերավաճառքի իրավունքի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհդրի թիվ 2001/84 դիրեկտիվ 1992թ. դեկտեմբերի 19-ի «Մտավոր սեփականության բնագավառում վարձակալական և հեղինակային իրավունքի որոշ հարակից իրավունքների մասին» Խորհրդի թիվ 92/100 դիրեկտիվ				
		ԸՆԴԱՄԵՆԸ			**30**	
			2008			
3.	• «Արբանյակային հեռարձակման և կաբելային վերահեռարձակման բնագավառում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1993թ. սեպտեմբերի 27-ի «Արբանյակային հեռարձակման և կաբելային վերահաղորդման հետ կապված հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների վերաբերյալ որոշ կանոնների կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 93/83 դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	• «Տվյալների բազաների իրավական պաշտպանության մասին» օրենքի նախագծի մշակում • «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և	1996թ. մարտի 11-ի «Տվյալների բազաների իրավական պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 96/9 դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	18	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում					
ԸՆԴԱՄԵՆԸ					33	
2009						
5.	«Պայմանական մուտքի վրա հիմնված կամ դրանից բաղկացած ծառայությունների իրավական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1998թ. նոյեմբերի 20-ի «Պայմանական մուտքի վրա հիմնված կամ դրանից բաղկացած ծառայությունների իրավական պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 98/84 դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
6.	• «Համակարգչային ծրագրերի իրավական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1991թ. մայիսի 14-ի «Համակարգչային ծրագրերի իրավական պաշտպանության մասին» Խորհրդի թիվ 91/250 դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					30	
					117	

2.1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[19]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների վերաբերյալ դասընթաց (5 օր/2006թ.)	Խորհրդատվություն նախնական փորձաքննություն

[19] Օրենսդրական համապատասխանեցման աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունում և գերատեսչությունում կստեղծվի ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանում:

2.2. Արդյունաբերական սեփականություն

Ներածություն

Առևտրային նշանների պաշտպանության բնագավառում ԵՄ գործող նորմատիվ իրավական ակտերը սահմանում են առևտրային նշանի ձեռքբերման, գործողության, օգտագործման պայմանները, առաջնության հարցերը, գրանցման ընթացակարգերը, առևտրային նշանն անվավեր ճանաչելու հիմքերը, ընթացակարգը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում ապրանքային և սպասարկման նշանների իրավական կարգավորման բնագավառի իրավահարաբերությունները կարգավորվում են «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին»[20] ՀՀ օրենքով: Այս բնագավառում հստակորեն չեն կարգավորվում այնպիսի հարցեր, ինչպիսիք են առևտրային նշանների գրանցման վիճարկումը, կողմերի իրավունքները նմանատիպ վեճի լուծման ընթացքում, ինչպես նաև ընթացակարգային այլ հարցեր:

Արդյունաբերական նմուշների իրավական պաշտպանությունը կարգավորող հիմնական իրավական ակտն է «Արտոնագրերի մասին»[21] ՀՀ օրենքը: Արդյունաբերական նմուշների իրավական պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությունը չի տարբերում գրանցված և չգրանցված արդյունաբերական նմուշները: Բացի այդ, չի նախատեսվում, թե արդյունաբերական նմուշի անվավերության կոնկրետ հիմքով ում կողմից կարող է բողոք բերվել: Չի նախատեսվում նաև հայտատուի պահանջով արդյունաբերական նմուշի հրապարակման հետաձգումը, ինչպես նաև գործերի բանավոր և գրավոր վարույթը կարգավորող դրույթները: Անհամապատասխանություններ են առկա նաև ինստիտուցիոնալ կառուցվածքի հարցերում, մասնավորապես, եթե ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է, որ արտոնագիրն անվավեր է ճանաչում լիազոր մարմնի բողոքարկման խորհուրդը, ապա եվրոպական օրենսդրության համաձայն՝ համապատասխան մարմնի կառուցվածքում բողոքարկման խորհրդի հետ մեկտեղ գործում է նաև անվավեր ճանաչելու գործերի բաժին, որն էլ զբաղվում է համապատասխան խնդիրներով:

Ի տարբերություն Եվրամիության օրենսդրության՝ առանձնահատուկ իրավական կարգավորման չեն ենթարկվում գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի, մասնավորապես, գինու տեղանունների և աշխարհագրական նշումների հետ կապված, ինչպես նաև տեխնոլոգիայի փոխանցման պայմանագրերի բնագավառում առաջացող իրավահարաբերությունները:

Բացի այդ, ՀՀ օրենսդրությունը, ի տարբերություն եվրոպականի, չի նախատեսում նաև բիոտեխնոլոգիական նորամուծությունների իրավական պաշտպանությանը վերաբերող առանձին իրավական ակտ:

2006 թվական

Ելնելով Հայաստանի տնտեսական զարգացման համար հարցի կարևորությունից և առկա ինստիտուցիոնալ հնարավորություններից՝ ապրանքային և սպասարկման նշանի իրավական պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի 1988թ. դեկտեմբերի 21-ի թիվ 89/104 դիրեկտիվին և 1993թ. դեկտեմբերի 20-ի թիվ 40/94 կանոնակարգին[22]:

Ապրանքային նշանի իրավական պաշտպանության բնագավառի հիմնարար օրենսդրական դրույթները ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում:

2007 թվական

Ապրանքային և սպասարկան նշանների իրավական պաշտպանության մասին ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի նաև 1995թ. դեկտեմբերի 13-ի թիվ 2868/95 կանոնակարգին[23]: «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունների հետևանքով կմշակվեն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման

---

[20] ՀՕ-41, 20.03.2000թ.:

[21] ՀՕ-175, 08.12.2004թ.:

[22] 1988թ. դեկտեմբերի 21-ի Խորհրդի առաջին դիրեկտիվ թիվ 89/104՝ «Առևտրային նշանի վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության մոտարկման մասին», 1993թ. դեկտեմբերի 20-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 40/94՝ «Համայնքի առևտրային նշանի մասին»,:

[23] 1995թ. դեկտեմբերի 13-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2868/95՝ «Համայնքի առևտրային նշանի մասին» Խորհրդի թիվ 40/94 կանոնակարգի կիրարկման մասին»:

տեղանունների մասին» օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ և համապատասխան գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր:

Արդյունաբերական նմուշի իրավական պաշտպանության հանգամանալից կանոնակարգման, ինչպես նաև ապրանքային նշանների կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների իրավական կարգավորման նպատակով ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի 2001թ. դեկտեմբերի 12-ի թիվ 6/2002 կանոնակարգին, ինչպես նաև 1998թ. հոկտեմբերի 13-ի թիվ 98/71 դիրեկտիվին [24]:

Արդյունաբերական նմուշի իրավական պաշտպանության բնագավառի ՀՀ օրենսդրության մեջ ԵՄ իրավական նորմերին համապատասխանեցնելու նպատակով «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ:

Ապրանքային նշանների և արտոնագրերի ձեռքբերման և դրանց գործողության ամբողջ ընթացքում վճարման ենթակա պետական տուրքերի գանձման ընթացակարգերը հստակեցնելու նպատակով կմշակվի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ և կընդունվի ՀՀ կառավարության համապատասխան որոշում:

2008 թվական

Արդյունաբերական նմուշների իրավական պաշտպանության հետ կապված պետական տուրքերի վճարման կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների իրավական կարգավորման նպատակով ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի 2002թ. հոկտեմբերի 21-ի թիվ 2245/2002 կանոնակարգին, 1995թ. դեկտեմբերի 13-ի թիվ 2869/95 կանոնակարգին և 2002թ. դեկտեմբերի 16-ի թիվ 2246/2002 Հանձնաժողովի կանոնակարգին[25]:

«Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի իրագործման համար կմշակվի «Արտոնագրերի մասին» օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ և համապատասխան գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի նախագծեր:

Արդյունաբերական սեփականության բնագավառի ոլորտային առանձնահատկությունները ՀՀ օրենսդրության մեջ արտահայտելու նպատակով այն կհամապատասխանեցվի 1992թ. հուլիսի 14-ի թիվ 2081/92 կանոնակարգին[26]:

Գյուղատնտեսական ապրանքների տեղանունների և աշխարհագրական նշումների առանձնահատուկ իրավական կարգավորման համար կմշակվի «Գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի տեղանունների և աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

2009 թվական

Արդյունաբերական սեփականության ոլորտում համապատասխանության կենթարկվեն , 2004թ. ապրիլի 27-ի թիվ 772/2004 կանոնակարգը և 1998թ. հուլիսի 6-ի թիվ 98/44 դիրեկտիվը[27]:

Տեխնոլոգիայի փոխանցման պայմանագրերի իրավական կարգավորման բացը լրացնելու նպատակով կմշակվի «Տեխնոլոգիայի փոխանցման պայմանագրերի իրավական կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Կարևորելով բիոտեխնոլոգիական նորարարությունների առանձնահատուկ իրավական կարգավորման անհրաժեշտությունը՝ կմշակվի «Բիոտեխնոլոգիական նորարարությունների իրավական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

---

[24] 2001թ. դեկտեմբերի 12-ի Խորհրդի կանոնակարգթիվ 6/2002՝ «Համայնքի արդյունաբերական նմուշի մասին», 1998թ. հոկտեմբերի 13-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 98/71՝ «Արդյունաբերական նմուշների իրավական պաշտպանության մասին»,:

[25] 2002թ. հոկտեմբերի 21-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2245/2002՝ «Համայնքի արդյունաբերական նմուշի մասին» թիվ 6/2002 Խորհրդի կանոնակարգի կիրարկման մասին», 1995թ. դեկտեմբերի 13-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2869/95՝ «Ներքին շուկայում ներդաշնակեցման գրասենյակին վճարման ենթակա վճարների մասին», 2002թ. դեկտեմբերի 16-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2246/2002՝ «Համայնքի արդյունաբերական նմուշի գրանցման համար Ներքին շուկայում ներդաշնակեցման գրասենյակին (Առևտրային նշաններ և արդյունաբերական նմուշներ) վճարվող վճարների մասին»:

[26] 1992թ. հուլիսի 14-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2081/92՝ «Գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի աշխարհագրական ցուցումների և ծագման տեղանունների պաշտպանության մասին»:

[27] 2004թ. ապրիլի 27-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 772/2004՝ «Տեխնոլոգիայի փոխանցման պայմանագրերի տեսակների նկատմամբ Համաձայնագրի 81(3) հոդվածի կիրառման մասին», 1998թ. հուլիսի 6-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 98/44՝ «Բիոտեխնոլոգիական նորարարությունների իրավական պաշտպանության մասին»:

2.2.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2006						
1.	• ՀՀ քաղաքացիական օրենսգքրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1988թ. դեկտեմբերի 21-ի «Առևտրային նշանի վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության մոտարկման մասին» Խորհրդի թիվ 89/104 առաջին դիրեկտիվ 1993թ. դեկտեմբերի 20-ի «Համայնքի առևտրային նշանի մասին» Խորհրդի թիվ 40/94 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	249	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					249	
2007						
2.	«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի կիրակումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի և գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի մշակում	1995թ. դեկտեմբերի 13-ի «Համայնքի առևտրային նշանի մասին թիվ 40/94 Խորհրդի կանոնակարգի կիրարկման մասին» Հանձնաժողովի թիվ 2868/95 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	225	
3.	«Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2001թ. դեկտեմբերի 12-ի «Համայնքի արդյունաբերական նմուշի մասին» Խորհրդի թիվ 6/2002 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	177	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		1998թ. հոկտեմբերի 13-ի «Արդյունաբերական նմուշների իրավական պաշտպանության մասին» Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի թիվ 98/71 դիրեկտիվ				
ԸՆԴԱՄԵՆԸ					402	
2008						
4.	«Արտոնագրերի մասին» օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի և գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի մշակում	2002թ. հոկտեմբերի 21-ի «Համայնքի արդյունաբերական նմուշի մասին թիվ 6/2002 Խորհրդի կանոնակարգի կիրարկման մասին» Հանձնաժողովի թիվ 2245/2002 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	150	
5.	• «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված պետական տուրքերի գանձման և հաշվառման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1995թ. դեկտեմբերի 13-ի «Ներքին շուկայում ներդաշնակեցման գրասենյակին վճարման ենթակա վճարների մասին» Հանձնաժողովի թիվ 2869/95 կանոնակարգ 2002թ. դեկտեմբերի 16-ի «Համայնքի արդյունաբերական նմուշի գրանցման համար ներքին շուկայում հարմոնիզացման գրասենյակին (Առևտրային նշաններ և արդյունաբերական նմուշներ) վճարվող վճարների մասին» Հանձնաժողովի թիվ 2246/2002 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	33	
6.	«Գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի տեղանունների և աշխարհագրական նշումների մասին»	1992թ. հուլիսի 14-ի «Գյուղատնտեսական արտադրանքի և	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման	4-րդ եռամսյակ	36	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	ՀՀ օրենքի նախագծի մշակում	սննդամթերքի աշխարհագրական ցուցումների և ծագման տեղանունների պաշտպանության մասին» Խորհրդի թիվ 2081/92 կանոնակարգ	նախարարություն			
ԸՆԴԱՄԵՆԸ					219	
2009						
7.	«Տեխնոլոգիայի փոխանցման պայմանագրերի իրավական կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2004թ. ապրիլի 27-ի «Տեխնոլոգիայի փոխանցման պայմանագրերի տեսակների նկատմամբ Համաձայնագրի 81(3) հոդվածի կիրառման մասին» Հանձնաժողովի թիվ 772/2004 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
8.	«Բիոտեխնոլոգիական նորարարությունների իրավական պաշտպանության մասին» օրենքի նախագծի մշակում	1998թ. հուլիսի 6-ի «Բիոտեխնոլոգիական նորարարությունների իրավական պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 98/44/EC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	18	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					33	
					903	

2.1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[28]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ մտավոր սեփականության գործակալություն)	-	Ապրանքային և սպասարկման նշանների իրավական պաշտպանության վերաբերյալ դասընթաց (10 օր/2006թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ մտավոր սեփականության գործակալություն)	-	Արդյունաբերական նմուշների իրավական պաշտպանության վերաբերյալ դասընթաց (10օր/2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ մտավոր սեփականության գործակալություն)	Անվավերության գործերով (մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքն անվավեր ճանաչելու գործերով) բաժնի ստեղծում		Խորհրդատվություն

[28] Օրենսդրական համապատասխանեցման աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունում և գերատեսչությունում կստեղծվի ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանում: